23 հոկտեմբերի 2014 թվականի N 1161 - Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏԱՐԱԾՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Հայաստանի Հանրապետության կառավարության համար 1 մասնաշենքի (փոստային հասցեն՝ Մելիք-Ադամյան 1) նկուղային հարկից 377 200 000 դրամ գնահատված արժեքով, 599.4 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքը (այսուհետ՝ տարածք) 15 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Սալոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) (գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, 0052, Զաքարիա Քանաքեռցու 1-ին նրբ., տուն 19):

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամ-

կետում ընկերության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ՝

1) ընկերությունը պարտավոր է սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրի կնքման գործընթացի ավարտից հետո 4 ամսվա ընթացքում կատարել 165 528 230 դրամի չափով ներդրումներ՝ հետևյալ համամասնությամբ՝

Աշխատանքի անվանումը	Նախատեսվող ներդրումների չափը (դրամ)
Նախագծանախահաշվային աշխատանքներ	3 753 380
Հովացման համակարգի ներդրում	29 365 460
Օդափոխության համակարգի ներդրում	31 766 535
Շինարարական աշխատանքներ	77 894 063
Էլեկտրամոնտաժային աշխատանքներ	18 868 392
Առաստաղի լուսավորություն	3 880 400
Ընդամենը	165 528 230

.

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ներդրումային պարտավորություն-ները չկատարելու կամ մինչև 50 տոկոս կատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 3 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբող-ջությամբ՝ միաժամանակ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 20 տոկոսի չափով.

3) սահմանված ժամկետում նախատեսված ներդրումները 50 կամ ավելի տոկոսով կա-տարելու, սակայն ամբողջությամբ չկատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 2 ամսվա ընթացքում կատարել նախատեսված և չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժա-մանակ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տուգանք՝ չկատա-րած ներդրումների գումարի 15 տոկոսի չափով.

4) համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության համաձայնեցմանը ներկայացնել հանրապետական նշանակության պատմամշակութային հուշարձան հանդիսացող շենքի նկուղային հարկի տարածքի օգտագործման պահպանության պայմանագիրը (պարտավորագիր) և ներդրումային ծրագրով իրականացվող շինարարական աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը.

5) պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման ընկերության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ